

ՊԱՏՄԱՐԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԴԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

պատմական գիտ. թեկնածու, ԵՊՀ

ՕՍԱՐ ԻԲՆ ԱԼ-ԽԱՏՏԱԲ ԽԱԼԻՖԱՅԻ ԿՈՂՍԻՅ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՉԱՅԿԱԿԱՆ ՉԱՍԱՅՆՔԻՆ ՏՐՎԱԾ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Ի դարի երկրորդ կեսին սկսվում են արաբական արշավանքները, որոնց արդյունքում Արաբական խալիֆայության տիրապետությունը հաստատվում է Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի երկրներում: Արաբական նվաճումները մեծ թափ են ստանում Օմար իբն ալ-Խաթտաբ (634-644 թթ.) խալիֆայի օրոք: 634 թ. արաբական զորքը մոտենում է Դամասկոսի մատույցներին. քաղաքը վեց ամիս պաշարված մնալուց հետո հանձնվում է մահմեդական զորքին՝ պարտավորվելով գլխահարկ վճարել արաբներին¹: Քաղաքի գրավումը կարևոր փուլ է դառնում մուսուլմանների կողմից Սիրիայի նվաճման համար. երկարատև պաշարումից հետո գրավվում է պաշտպանությունը լավ նախապատրաստված քաղաքը: Այն ուղի է բացում մահմեդականների հետագա առաջխաղացման համար: Արաբները շարժվում են դեպի Հյուսիսային Սիրիա և կարճատև պաշարումից հետո գրավում մի շարք քաղաքներ, որոնց բնակչությանը տրվում են հաշտության ու անվտանգության պայմանագրեր:

638 թ.՝ երկու տարվա պաշարումից հետո, գրավվում է Երուսաղեմը: Արաբական նվաճումների շրջանում Երուսաղեմը կոչվում էր Իլյա. այս անվանումը քաղաքը ստացել էր Ք. ծ. ա. Բ. դարում, երբ կազմում էր Հռոմեական կայսրության մասը²: Միջնադարյան մուսուլման պատմագիրը ալ-Քուֆին գրում է, որ արաբ զորահրամանատար Աբու Ուբայդան հրամայում է պաշարված քաղաքի բնակչությանը իսլամ ընդունել՝ սպառնալով հակառակ դեպքում քաղաքի վրա արշավել³: Բնակիչները չեն ընդունում այդ առաջարկը և դիմում են Աբու Ուբայդային՝ հաշտու-

¹ Տևու Ալ-Իմամ Աբու Խասան ալ-Բալազուրի, Futuh al-buldan, Bairut, 1984, էջ 132:

² Տևու Ա. Նույահատ, Fath al-Khuds, manshurat Filastin al-muhtala, 1980, էջ 4:

³ Տևու Իբն Աթամ ալ-Կուֆի, Kitab al-futuh v. 1, Huderabad, 1968, էջ 289:

թյան պայմանագիր կնքելու համար, խնդրում, որ քաղաք ժամանի Օմար խալիֆան:

Վերջինիս կողմից Երուսաղեմի քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագրի բնագիրն առկա է Հիմնականում միջնադարյան երեք պատմագիրների՝ ալ-Տաբարիի, ալ-Յակուբիի և Եվտիքիոսի երկերում: Պայմանագրի մանրամասն չարադրանքն առկա է մուսուլման պատմագիր ալ-Տաբարիի երկում, որի համար Հիմնական աղբյուր է եղել Սայֆի աշխատությունը: Վերջինիս և Եվտիքիոսի հիշատակած պայմանագրում Երուսաղեմը կոչվում է «Իլյա», իսկ ալ-Յակուբիի երկում՝ և՛ «Իլյա», և՛ «Կուդա» (Սուրբ քաղաք)⁴: Քաղաքի բնակիչները պայմանագրով ստանում էին կյանքի, գույքի, եկեղեցիների անվտանգություն, խոստացվում էր, որ եկեղեցիները չեն քանդվելու և որպես կացարան չեն օգտագործվելու մուսուլմանների կողմից: Բացի այս պայմաններից՝ ալ-Տաբարիի պատմության մեջ հիշատակվում է խաչերի անձեռնմխելիության մասին: Մուսուլմանները պարտավորվում էին չստիպել քրիստոնյաներին՝ ընդունել իսլամը, հրեաները չպետք է ապրեին քաղաքում, նշվում էր նաև «ավազակների», այսինքն՝ զինված մարդկանց մի խմբի մասին, որը պարտիզանական մարտեր էր մղում մուսուլմանների դեմ՝ միաժամանակ չկորցնելով յուրաքանչյուրի կողոպտելու առիթը⁵:

Այս տեսակետից ուշադրան է նաև Երուսաղեմի հայկական համայնքին՝ Մուհամմադ մարգարեի և մուսուլման հաջորդ խալիֆաների կողմից տրված պայմանագրերի իրողությունը, որի մասին հիշատակում են Երուսաղեմի պատմության գիտակաները: Օրինակ՝ Մ. եպս. Աղավնունին գրում է, որ քրիստոնեության հաստատման վաղնջական ժամանակներից հայ ուխտավորներ են այցելել Երուսաղեմ: Հայոց Անաստաս վարդապետը, իշխան Համազասպ Կամսարականի խնդրանքով, այցելել է Երուսաղեմ և կազմել տեղի հայկական վանքերի ցուցակը, որոնց թիվը հասնում էր 70-ի⁶: Նրա երկը մեզ է հասել ուշ շրջանի ձեռագրերով⁷: Այս երկին անդրադարձել է նաև Ղ. Ինճիճյանը՝ կատարելով մեջբերումներ, որ դեռևս Տրդատ արքայի (287-330 թթ.) թագավորության և Ս. Գրիգոր Լուսավորչի (302-336 թթ.) հայրապետության օրոք «մեծամեծք հայոց շինեցին վանորայք ի սուրբ քա-

⁴ Տևս Ա. Տեր-Ղևոնդյան, Արար մատենագիրներ, Թ.-Ժ. դարեր, Երևան, 2005, էջ 243:

⁵ Տևս Abu Jaafar Ibn Jarir al-Tabari, Tarikh al-Rusul wa al-Muluk, v. III, Kahira, 1962, էջ 609:

⁶ Մ. Աղավնունի, Հայկական հին վանքեր և եկեղեցիներ Ս. Երկրին մեջ, Երուսաղեմ, 1931, էջ 150:

⁷ Ամենավաղ ժողովածուն, որտեղ ընդգրկված է բնագիրը, Մատենադարանի 1770 թվա-
համարը կրող գրագիրն է՝ ընդօրինակված 1589 թ. մի ձեռագրից, որը կազմվել է 1425 թ. (Պ. Չոբանյան, Անաստաս վարդապետի կազմած՝ Երուսաղեմի հայկական վանքերի ցուցակի հարցերի շուրջ, ՊԲՀ, 2001, թ. 1, էջ 28):

ղաքն յԵրուսաղէմ»։ Նա նշում է, որ «բազմութիւն ուխտաւորաց ի մերոց Հայկազեանց յաճախէին գնալ անդր եւ նմին իրի դէպ լինէր այլ եւ այլ նախարարաց զանազան վանորայս լինել ի դիւրութիւն բնակութեան ուխտաւորաց իւրաքանչիւր ցեղից յուրոյն ուրոյն վանս»⁸։ Տ. Սաւալանյանը եւս գրում է, որ Երուսաղէմում «Կոստանդիանոսի ու անոր մոր՝ Հեղինէին ընծայուած Ս. Տեղեաց շինութիւններուն, ըստ ազգային աւանդութեան, մասնակից եղած է մերս Տրդատ»⁹։ Հղելով Անաստաս վարդապետի երկը։ Մի շարք հետազոտողներ Անաստասի երկը թվագրում են է. դարով։

Ե.-Ձ. դարերի Երուսաղէմի Հայոց վանքերի շքեղության մասին են վկայում ԺԹ. դարավերջերին քաղաքի տարբեր հատվածներում կատարված շինարարական աշխատանքների ժամանակ Հայտնաբերված Հայատառ սքանչելի խճանկարները¹⁰։ Երուսաղէմի վանքերի ու եկեղեցիների բազմաքանակության մասին է վկայում նաև Անտիոք Ստրատիգը¹¹։

Դ.-Ե. դարերում՝ Հատկապես Ս. Հակոբ եկեղեցու կառուցումից հետո, Հայ վանականներն իրենց հոգևոր իշխանությունը տարածեցին Պաղեստինի, Սիրիայի, Եգիպտոսի Հայ բնակչության վրա։ Այս շրջանում Հայոց եկեղեցին ընդգրկեց Բյուզանդական կայսրության փորձերին, որը ձգտում էր «եկեղեցիների միասնության» գրոշի ներքո գրկել Հայերին քաղաքական ինքնուրույնությունից։ Ձ. դարում Երուսաղէմում Ս. Հակոբ եկեղեցու հիմքի վրա ստեղծվեց Հայկական թեմը։ Այս շրջանում, Երուսաղէմի Հայ և Հույն եկեղեցիների միջև դավանաբանական վեճերից բացի, պայքար էր գնում՝ ստանձնելու Երուսաղէմի սրբավայրերի և քրիստոնեական միասնական եկեղեցու ղեկավարությունը։ Այս պայքարի ընթացքում Հայոց եկեղեցին ճնշումների ենթարկվեց, որի մասին հիշատակում է Անաստաս վարդապետը¹², ինչպես նաև Երուսաղէմի՝ ծագումով Հույն Հովհաննես եպիսկոպոսապետը (575-593 թթ.)՝ Աղվանից Աբաս կաթողիկոսին (552-596 թթ.) ուղղած նամակում, որտեղ գրում էր, որ քաղաքի Հայերը «մին Հալածեալքն առ թագաւորն գնացին, ասելով, թէ Հալածեաց ըզմեզ Հայրապետն Երուսաղէմի»¹³։ Հովհաննես եպիսկոպոսն իր նամա-

⁸ Ղ. Ինճիճեան, Հալիստութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Խ. Բ., Վենետիկ, 1835, էջ 199։

⁹ Տ. Սաւալանյան, Պատմութիւն Երուսաղէմի, Խ. Ա., Երուսաղէմ, 1931, էջ 212։

¹⁰ Գ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, Խ. Բ., Երևան, 1987, էջ 340-342։

¹¹ Տիւն Ա. Տրատиг, Пленение Иерусалима персами в 614 г., С. Петербург, 1909, էջ 25-29։

¹² Տիւն Ղ. Ալիշան, Հայապատում, Պատմիք եւ պատմութիւնք հայոց, մաս Բ., Վենետիկ, 1901, էջ 229։

¹³ «Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի թողթը առ Աբաս Աղուանից կաթողիկոս, հրատ.՝ Կ. վարդապետ, արտատպած «Արարատ» ամսագրից, Վաղարշապատ, 1896, էջ 3։

կուժ հաստատում է, որ հայոց իշխանները այցելել են Երուսաղեմ և փորձել պաշտպանել հայոց վանքերը ոտնձգություններից:

Երուսաղեմի հայ համայնքի դավանական կողմնորոշման խնդիրը սրվեց հատկապես Զ. դարի երկրորդ կեսին, որի պատճառով Անաստաս վարդապետը, իշխան Համազասպ Կամսարականի խնդրանքով, այցելեց Երուսաղեմ՝ գրի առնելու հայոց վանքերի ցուցակը: Այս բոլոր հիշատակությունները փաստում են, որ հայերը գործուն մասնակցություն ունեին քաղաքի տնտեսական, հոգևոր ու մշակութային կյանքում¹⁴: Փաստորեն, արաբական արշավանքների նախօրյակին Երուսաղեմի հայ հոգևորականությունը կայուն և ուրույն դերակատարում ունեցավ քաղաքի կյանքում: Նրա իրավասության տակ էին մի շարք սրբավայրեր, և այս փաստը աննկատ չէր մնում մուսուլման նվաճողների կողմից: Կարելի է պնդել, որ մուսուլման պատմագիրների հիշատակած և Օմար խալիֆայի՝ Երուսաղեմի քրիստոնյա բնակչությանը տված պայմանագիրն ընդհանուր էր համարվում քաղաքի քրիստոնյա բնակչության համար, սակայն քաղաքի այլազգի քրիստոնյաները ևս ստացան իրենց պայմանագրերը:

Ըստ Երուսաղեմի պատմության գիտակ Տ. Սավալանյանի «Պատմություն Երուսաղեմի» աշխատության՝ հայոց Աբրահամ պատրիարքը, տեսնելով իսլամի հաջողությունները Մուհամմադի օրոք, քրիստոնյաներից կազմված պատվիրակության հետ ժամանում է Մեդինա՝ փորձելով նրանից ստանալ հայկական համայնքի անվտանգությունն ապահովող փաստաթուղթ: Մարգարեն ընդառաջում է նրա ցանկությանը՝ «տալով ձեռքին դրոշմը կրող հաւատարմագիր մը, վասնզի ինք անգրագէտ էր»¹⁵: Այս պայմանագիրը տրվում էր «Երուսաղեմ ու Դամասկոս ու Արաբիոյ միւս սահմանները գտնուող հայոց եպիսկոպոսներուն ու վարդապետներուն եւ հպատակ ժողովուրդներուն, եթովպացիներուն, ղպտիներուն եւ ասորիներուն»: Թվարկվում են հայ համայնքին տրված բոլոր սրբավայրերը Երուսաղեմում՝ Ս. Հարություն տաճար, Ս. Հակոբ եկեղեցի, Զիթենյաց վանք, Բեթղեհեմի եկեղեցի և այլն, որոնք հետագայում վեճի առարկա պիտի դառնային Հայ և Հույն եկեղեցիների միջև: Աբրահամ պատրիարքը ևս պարտավորվում է հարկեր վճարել մուսուլմանական համայնքին: Ըստ պատմագրի, սակայն, այժմ Երուսաղեմի պատրիարքարանի գիվանատանը չկա հիշյալ հավատարմագիրը, որի փոխարեն առկա է հին թղթի վրա գրված մի հրովարտակ, որը «բնագիրին պատճենը ըլլալը կը թուի և 30 վկաների ստորագրութիւնը կը կրէ, որոնց մէջ է նաեւ Օմարի անունը»:

¹⁴ Տևյ V. Azaryan, The Armenian Quarter of Jerusalem, London, 1984, էջ 57-59:

¹⁵ Տևյ S. Սաւալանյան, նշվ. աշխ., էջ 261:

Այն «Հիմերէթի հաստատութենէն առաջ գրուած է, ուստի թուական ալ չի կրէր»¹⁶: Տ. Սավալանյանը նշում է, որ Մուհամմադի՝ Աբրահամ պատրիարքին տրված պայմանագրի մասին հիշատակում է Եգիպտոսի Այյուբյան հարստության հիմնադիր Սալահ ալ-Դինը (1171-1193 թթ.)՝ Երուսաղեմի հայ միաբանությանը տրված իր հրովարտական:

Նշենք, որ Տ. Սավալանյանի վերոհիշյալ երկի համար աղբյուրներ են հանդիսացել Հին և Նոր Կտակարանները և հայ պատմագիրներին՝ Սեբեոսի, Ղևոնդի, Ստեփանոս Ասողիկի և այլոց երկերը, ինչպես նաև Զեքի Էդ-Դին արաբ պատմագրի «Յաղթութիւն Երուսաղէմի» երկը, բազմաթիվ հրովարտականներ, հիշատակարաններ: Վերջինս մուսուլմանական պատմագրությանը հայտնի չէ: Միայն Մ. արք. Օրմանյանն է, որ հիշատակում է նման մի անձնավորության մասին՝ «Զեքի էֆենտի Պաշմաք ճիզատէ», որը եղել է «օսմանցի քննիչ Երուսաղէմի սուրբ տեղեաց»¹⁷: Տ. Սավալանյանը նշում է, որ Մուհամմադ մարգարեի մահից հետո, երբ սկսվում են արաբական նվաճումները, Աբրահամ պատրիարքը 40 հայ վանականներին հետ դիմում է Ալի իբն Աբու Տալիբին, որ հաստատի Մուհամմադի՝ իրենց տրված արտոնագրերը: Հեղինակը, հենվելով Զեքի Էդ-Դինի վերոհիշյալ երկի վրա, գրում է, որ այս դեպքը եղել է Օմարի կողմից Երուսաղեմը գրավելուց առաջ¹⁸: Տ. Սավալանյանը գրում է, որ 636 թ., երբ Օմարը գրավում է Երուսաղեմը, Մուհամմադի՝ քաղաքի հայկական համայնքին տրված պայմանագիրն ամրագրվում է նոր դաշնադրությամբ: Երբ Օմարը մոտենում է քաղաքի պարիսպներին, նրա մոտ է շտապում քաղաքի հույն պատրիարք Սոֆրոնիոսի եղբայր Պետրոսը և խնդրում ապահովություն գիր՝ պարտավորվելով հարկ վճարել նրան: Օմարը նրան տալիս է այդ պայմանագիրը, ըստ որի՝ ապահովության երաշխիք էր տրվում քաղաքի բնակիչներին, ունեցվածքին, եկեղեցիներին, որոնք չպետք է քանդվեին, և մուսուլմանները այնտեղ չպետք է բնակվեին: Հեղինակը գրում է, որ Երուսաղեմի հայ բնակիչներն էլ իրենց հերթին Օմարին ներկայացնում են Մուհամմադի կողմից քաղաքի հայ համայնքին տրված պայմանագիրը: Խալիֆան, համոզվելով փաստաթղթի վավերականության մեջ, հաստատում է այն ու տալիս նոր պայմանագիր, որը, աննշան տարբերություններով, կրկնում էր նախորդին: Օմար խալիֆայի՝ Երուսաղեմի հայկական համայնքին տրված այս պայմանագիրն իր որոշ պայմաններով համընկնում էր մուսուլմանական պատմագրության մեջ վկայված Օմար խալի-

¹⁶ Անդ, էջ 262:

¹⁷ Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, Ս. Էջմիածին, 2001, հ. Գ., սյուն. 4055:

¹⁸ Տե՛ս Տ. Սավալանյան, նշվ. աշխ., էջ 271:

Ֆայի՝ Երոսաղեմի քրիստոնյա բնակիչներին տրված պայմանագրի կետերին: Քաղաքից հեռացողներին խոստացվում էր անվտանգություն, իսկ մնացողներին՝ գույքի անձեռնմխելիություն: Հայ բնակիչները պետք է քաղաքից դուրս հանեին հույն ավազակներին ու լրտեսներին: Քաղաքում մնացող հայերը պետք է հարկ վճարեին, սակայն մինչև հունձքի ժամանակը նրանցից ոչինչ չպետք է պահանջվեր: Պայմանագրում հիշատակվում է հայոց պատրիարք Գրիգոր Ուրֆացու անունը, ով Հպատակություն էր հայտնել Օմարին: Այս ամենը մեկ անգամ ևս հաստատում է, որ նվաճող արաբը զերծ չէր հուժանիզմի դրսևորումներից. նրա հիմնական նպատակը ավերածությունն ու ջարդը չէր, մի երևույթ, որ նկատում ենք մի քանի դար հետո թաթար-մոնղոլների նվաճումների ժամանակ, որոնց մասին արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրը ունի սահմանակցուցիչ նկարագրություններ: Միջնադարյան արաբ նվաճողին հատուկ էր ուխտին հավատարիմ մնալը, որով Հպարտանում էին անցյալում ավազուտների և դաժան բռնության մեջ ապրող արաբական ցեղերը:

Տ. Սավալանյանի երկում առկա է նաև Զեքի էդ-Դինի կողմից վկայակոչված՝ Երոսաղեմի քրիստոնյա բնակչությանը Օմարի կողմից տրված պայմանագրի բնագիրը, որը բովանդակված էր համընկնում է մուսուլման պատմագիրների կողմից հիշատակված պայմանագրի հետ: Երոսաղեմի հայկական համայնքի պատմությունը շարադրել են նաև Ա. Հովհաննեսյանցը, Մ. արք. Օրմանյանը: Ա. Հովհաննեսյանցն իր պատմությունը շարադրել է՝ հենվելով հին և արդի հայ մատենագիրների թողած հիշատակությունների վրա, օգտագործելով Եգիպտոսի և Օսմանյան սուլթանների տված հրովարտականքները, Յունս էլ ձեռքի Արաբացու «Պատմութիւն Երոսաղեմի» աշխատությունը: Նա, անդրադառնալով Օմար խալիֆայի՝ Երոսաղեմի քրիստոնյա և հայ բնակչությանը տրված պայմանագրերին, հիշատակում է նաև նրան վերագրվող՝ Ասորիքի քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագիրը, որով սահմանվում էին քրիստոնյաների պարտավորությունները մուսուլմանական համայնքի նկատմամբ: Օմարի կողմից Երոսաղեմը գրավելուց հետո քաղաքի հայ եպիսկոպոսներն իրենց իրավունքներով ու լիազորություններով հավասարվեցին հույների պատրիարքին, և «գրեթէ կաթողիկոսական փոխանորդ էին Պաղեստինի եւ Ասորիքի մէջ՝ Եգիպտոսի սուլթանութեան Հպատակ գաւառաց վրայ»¹⁹:

Մաղաքիա արք. Օրմանյանը նշում է, որ է.-ԺԳ. դարերի ընթացքում Երոսաղեմի մատյաններում նշված են հայ քսանմեկ եպիսկոպոսների անուններ: Հետագա դարերի ընթացքում Երոսաղեմի հոգևոր առաջ-

¹⁹ Մ. արք. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ., սյուն. 2135:

նորոգները ձգտում էին մահմեդական իշխողներից առանձնաշնորհներ և արտոնություններ ստանալ՝ Հայ համայնքի կյանքը անվտանգ դարձնելու համար: Այսպես՝ Մաղաթիա արք. Օրմանյանը գրում է, որ 1311 թ. Երուսաղեմի աթոռակալ Սարգիսը տեղի Հայ համայնքի իրավունքները պաշտպանելու և իր դիրքերն ամրապնդելու համար դիմում է Եգիպտոսի սուլթան Նասր Մուհամմադին՝ ցույց տալով նրան Օմարի կողմից Հայ համայնքին տրված պայմանագիրը: Սուլթանը 1312 թ. իր նոր հրովարտակով հաստատում է այն: Սարգիսը մեկ անգամ ևս դիմում է սուլթանին՝ հաստատելու Հայոց իրավունքները Երուսաղեմում, քանի որ Վրաց եկեղեցին ցանկանում էր սեփականել Ս. Հակոբի վանքը և «տէր լինել Հայոց հաստատութիւններուն»²⁰:

1187 թ., երբ Այյուբյան հարստության հիմնադիր Սալահ ալ-Դինը մտնում է Երուսաղեմ, այնտեղ բնակվում էին մոտ հազար Հայ ընտանիք և հինգ հարյուր Հայ ուխտավոր: Տ. Սավալանյանը նշում է, որ Սալահ ալ-Դինի մոտ է գալիս քաղաքի Հայոց պատրիարք Աբրահամը՝ իր հպատակությունը հայտնելու, նաև ցույց տալու Օմարի, Ալիի կողմից Երուսաղեմի հայկական համայնքին տրված պայմանագրերը, և խնդրում է հաստատել այս փաստաթղթերը նոր դաշնագրությունը: Սալահ ալ-Դինը նոր հրովարտակ է շնորհում հայկական համայնքին, որով հաստատվում էին վերջինիս իրավունքները մի շարք սրբավայրերի ու եկեղեցիների նկատմամբ²¹:

Նշենք, որ Հայ-արաբական վաղնջական շփումներին և Երուսաղեմի հայկական համայնքին Մուհամմադի ու նրա հաջորդների կողմից տրված պայմանագրերին անդրադարձել են նաև ժամանակակից արաբ պատմաբանները: Արաբ հետազոտող Մուհամմադ Ալի Հուրիյեն իր աշխատության մեջ հիշատակում է Տ. Սավալանյանի երկը՝ նշելով Մուհամմադի կողմից Աբրահամ պատրիարքին, ինչպես նաև Օմարի կողմից Երուսաղեմի հայկական համայնքին տրված պայմանագրերի մասին: Նա նկատում է, որ Հայ-արաբական պայմանագրերի պատմությունը գալիս է դեռևս 652 թ. Ասորիքի կուսակալ Մուավիայի և Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու միջև կնքված փոխադարձ համաձայնագրի առկայությունից²²:

Արաբ պատմաբան Ֆուադ Շուբատը ևս հավաստում է, որ Օմարը, նվաճելով Երուսաղեմը, ապահովության գիր է տալիս հայկական համայնքին՝ նկատի ունենալով Մուհամմադի բարեհաճ վերաբերմունքը քրիս-

²⁰ Անդ, պուն. 2137:

²¹ Տ. Սավալանյան, նշվ. աշխ., էջ 408-413. Ա. Տէր-Յովհաննէսեանց, Ժամանակագրական պատմություն և. Երուսաղեմի, հ. Ա., Երուսաղեմ, 1890, էջ 155-163:

²² Ma'arad al-Kitabi al-arabi al-armani al-awal, tahta tiayati al-doctor Muhammad Ali Huriye, p. 4.

տոնյաների նկատմամբ և նրա կողմից Երուսաղեմի հայկական համայնքին տրված դաշնագիրը²³:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ Օմարի՝ Երուսաղեմի հայկական համայնքին տրված պայմանագիրը, որը հաստատվել է հետագա դարերի մուսուլման իշխողների կողմից, ունի պատմական ամուր և կայուն հիմք: Հայկական համայնքը քրիստոնեության հաստատման վաղնջական ժամանակներից ի վեր ստեղծել է մշակութային հարուստ արժեքներ՝ գործուն մասնակցություն ունենալով քաղաքի հոգևոր ու քաղաքական կյանքում: Այս փաստը աննկատ չի մնում և չի անտեսվում Օմար խալիֆայի կողմից. նա հայկական համայնքին տալիս է իրավասություններ քաղաքի սրբավայրերի, եկեղեցիների, վանքերի նկատմամբ՝ կառուցված հայերի կողմից դեռևս Ս. Գրիգոր Լուսավորչի հայրապետության օրոք: Այս մասին են վկայում Երուսաղեմի պատմության հայկական աղբյուրները:

Մուհամմադ մարգարեի՝ Երուսաղեմի հայոց համայնքին տրված պայմանագիրը իսլամ-հայկական շփումների ամենավաղ ապացույցն է և մատնանշում է հայերի՝ մուսուլմանների հետ փոխհամաձայնության գալու առաջին փուլը²⁴: Իսկ Օմար խալիֆայի՝ Երուսաղեմի հայկական համայնքին տրված դաշնագիրը, որը հաստատվել է հետագա դարերի մահմեդական իշխողների կողմից, ունի պատմական կայուն և ամուր հիմք:

РЕЗЮМЕ

Темой изучения статьи стал договор, данный халифом Омаром ибн аль-Хаттабом христианскому населению Иерусалима. Для нас особенно важны договоры данные пророком Мухаммедом, халифом Омаром и последующими мусульманскими правителями армянской общине Иерусалима, с помощью которых армяне получили неоспоримые права по отношению ряда святынь Иерусалима и дружественное отношение мусульманских правителей.

SUMMARY

The treaty, which was given from caliph Omar ibn al-Khattab to Jerusalem Christian population, has become a research material for the article. Treaties, which were given by the Prophet Muhammad, caliph Omar and succeeding Muslim governors, are highlighted correspondingly. These treaties gave the Armenians indisputable rights for several sanctuaries deserving Muslim governors' favorable attitude.

²³ Տե՛ս F. Shubat, al-Markazu al-khanuni li al-ajamibi fi Suriya, p. 11.

²⁴ Տե՛ս S. Dadoyan, The Armenians in the medieval islamic world, vol. 1, էջ 52: